

Պատասխան- Հանրության շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միացվել միմյանց կամ առանձնացվել: Մինչև օրենսդրական նախաձեռնության ներկայացումը՝ կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ:

Ներկայումս շրջանառվում է համայնքների խոշորացման երկու սցենար՝ «փնջային» (համայնքները միավորվում են ելնելով ծրագրի (հիմնականում՝ տնտեսական ներուժ պարունակող) և այլ էական նշանակություն ունեցող հանգամանքների շուրջ) և "շրջանային" (խոշորացված համայնքի կազմում ներառվում են նախկին խորհրդային վարչական շրջանի տարածքում գտնվող բոլոր բնակավայրերը): Խոշորացման գործընթացը ենթադրում է հետևյալ փուլերը.

- համայնքների խոշորացման երկու սցենարի (փնջային և շրջանային) խոշորացման համապատասխան հիմնավորումների նախապատրաստում, շահառու համայնքների առաջնահերթ հիմնախնդիրների վերհանում,
- համայնքների խոշորացման երկու սցենարի շուրջ բազմաոլորտ մասնագիտական քննարկումների և անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթի մշակման համար փորձագիտական խմբի ստեղծում,
- համայնքների խոշորացման երկու սցենարի վերաբերյալ մշակված առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը,
- ընտրված խոշորացման տարբերակի քննարկում համայնքների բնակիչների, մարզային համայնքային պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, և հանրային լուսման կազմակերպում,
- ընտրված խոշորացման տարբերակի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի, մասնավորապես՝ ՀՀ վարչատարածքային բաժանման մասին, ՀՀ տեղական ինքնակառավարման մասին, Ընտրական օրենսգրքում և այլ օրենքներում անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ օրենսդրական փաթեթի մշակում և ընդունում,
- ընտրված խոշորացման տարբերակի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթի ներկայացում ԵԽ-ի փորձագիտական եզրակացության,
- խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպում և անցկացում,
- օրենսդրական փաթեթի ընդունում ՀՀ ԱԺ-ի կողմից,
- նոր կազմավորվող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում և անցկացում,
- վարչատարածքային նոր բաժանման կիրարկում, ներդրումային ծրագրերի իրականացում: